Աշխարհաքաղաքական ճարտարապետությունը և «*Սուննիական ՆԱՏՕ*»-ի ռազմավարական որոշիչները

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 04.05.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ-ը վերլուծում է Թուրքիայի, Պակիստանի և Սաուդյան Արաբիայի Թագավորության մասնակցությամբ նոր ռազմաքաղաքական դաշինքի ձևավորման գործընթացները, ինչպես նաև այդ ձևաչափում Եգիպտոսի ներգրավման պատճառները: Դիտարկվում է յուրաքանչյուր մասնակցի խորը շարժառիթը՝ սկսած Անկարայի կողմից ՆԱՏՕ-ի «միջուկային հովանոցին» այլընտրանք փնտրելուց մինչև Հնդկաստանի և Աֆղանստանի հետ առճակատման պայմաններում ռազմավարական կայունություն ապահովելու Իսլամաբադի ձգտումը: Հատուկ ուշադրություն է դարձվում նախագծի պաշարային սիներգիային, որտեղ էր Ռիադի ֆինանսական հնարավորությունները զուգորդվում են Պակիստանի միջուկային ներուժի և Թուրքիայի տեխնոլոգիական փորձի հետ: Հետևություն է արվում, որ «Ասիական ՆԱՏՕ» ստեղծելու նախաձեռնությունը մակրոտարածաշրջանը նախկին անվտանգության ճարտարապետության փլուզման պայմաններում կայունացնելու սուննի խոշորագույն տերությունների համակարգային փորձն է:

Բանալի բառեր. *աշխարհաքաղաքականություն, Մերձավոր Արևելք, «Սուննիական ՆԱՏՕ», Թուրքիա, Պակիստան, Սաուդյան Արաբիա, Եգիպտոս, տարածաշրջանային անվտանգություն, միջուկային զսպում, աշխարհատնտեսություն:*

1. Բանակցային գործընթացը և առանցքային հակասությունները

2026թ. սկզբից համաշխարհային ԶԼՄ-ներում արձանագրվում է տեղեկությունների հայտնվելը Թուրքիայի, Պակիստանի և Սաուդյան Արաբիայի Թագավորության միջև նոր ռազմաքաղաքական միավորում ստեղծելու հարցով գաղտնի խորհրդակցությունների մասին:

Ստացվող տվյալների վերլուծությունը վկայում է բանակցային գործընթացում էական դժվարությունների մասին, որոնք պայմանավորված են պահպանվող միջպետական հակասություններով՝ չնայած նման դաշինք ձևավորելու հարցում կողմերի արտահայտված ռազմավարական շահագրգռվածությանը:

2026 թ. հունվարից թուրքական ծագման ներքին տեղեկատվության համաձայն՝ դաշինքի հիմնարար չափանիշները դիտարկվել են որպես գործնականում համաձայնեցված ու միայն մանրամասն տեխնիկական մշակում են պահանջում: Սակայն գարնանային շրջանից արաբական ալիքներով տեղեկություններ են ստացվել միության ճարտարապետության հետ էր Ռիադի սկզբունքային անհամաձայնության մասին, միություն, որը ենթադրում է Անկարայի առաջնորդությունը:

Գործընթացի դինամիկան վկայում է դաշինքի հաստատութենակացման հարցում Թուրքիայի փութաջան մոտեցման մասին, այն դեպքում, երբ Սաուդյան Արաբիան ծայրահեղ շրջահայացություն է ցուցաբերում: ՍԱԹ-ի նման դիրքորոշումը թելադրված է Իրանի շուրջ իրավիճակի սրմամբ և խորացող իրանական ճգնաժամի պայմաններում տարածաշրջանի աշխարհաքաղաքական փոխդասավորության անորոշության բարձր աստիճանով:

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 18.04.2026 թ.:

2. Թուրքիայի ռազմավարական դրդապատճառը. ՆԱՏՕ-ի այլընտրանքի որոնում

Ակնհայտ է թվում, որ ներգրավված կողմերից յուրաքանչյուրն առաջնորդվում է էական դրդապատճառներով՝ հաշվի առնելով այդ դաշինքի հիմնադրման հեռանկարները: Թուրքիան, խորը մտահոգություն հայտնելով ՆԱՏՕ-ի կառույցների համակարգային քայքայման և դաշնակիցների նկատմամբ ԱՄՆ-ի վերջնագրային քաղաքականության հետևանքով կազմակերպության ապաինտեգրման հնարավոր սպառնալիքի կապակցությամբ, առարկայորեն ստիպված է հավաքական անվտանգության այլընտրանքային մեխանիզմների որոնում նախաձեռնել: Անկարայի համար Հյուսիսատլանտյան դաշինքի համահարթեցումը կրիտիկական ռիսկեր է ստեղծում՝ կապված «միջուկային զսպման» երաշխիքների կորստի, առաջատար պաշտպանական-արդյունաբերական տեխնոլոգիաների հասանելիության զգալի սահմանափակման և ազգային պաշտպանական ներուժի ընդհանուր թուլացման հետ: Այս գործընթացներն ընթանում են տարածաշրջանում «*իսրայելական ծավալապաշտության*» ակտիվացման համապատկերում, որը թուրքական ղեկավարությունը մեկնաբանում է որպես Մերձավոր Արևելքում Վաշինգտոնի ռազմավարական առաջնահերթությունների հիմնարար վերափոխման վկայություն: Մակրոտարածաշրջանում՝ Կենտրոնական Ասիայից մինչև Աֆրիկա, Անկարայի ռազմաքաղաքական հավակնությունների ծավալը ներկայումս բավարար չափով չի ամրապնդվում սեփական պաշտպանական պաշարի համարժեք մակարդակով: Այդ կապակցությամբ թուրքական քաղաքական վերնախավերն «*Ասիական դաշինքի*» նախագիծը դիտարկում են որպես ռազմավարական գործիք, որը կոչված է եթե ոչ ամբողջությամբ չեզոքացնել ՆԱՏՕ-ի հնարավոր փլուզումից առաջացած ծախսերը, ապա ապահովել անվտանգության նոր ճարտարապետության ձևավորում, ինչը թույլ կտա պահպանել աշխարհաքաղաքական ստատուս-քվոն, որը ձեռք է բերվել Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցության շրջանակներում:

3. Պակիստանի գործոնը. գոյութենական մարտահրավերներ երկու ճակատով

Պակիստանի համար վերոնշյալ դաշինքի ստեղծման հարցով խորհրդատվական գործընթացին առավել ակտիվ մասնակցության պատճառ է դարձել Հնդկաստանի հետ զինված բախումը 2025 թ. մայիսին: Տվյալ միջադեպը հաստատել է ձգձգված սրացման փոխակերպումը ռազմական գործողությունների ներունակ թատերաբեմի աշխարհագրության էական ընդլայնման փուլի: Սահմանային միջադեպերի նախկին բնույթը փոխարինվել է կողմերի կողմից հակառակորդի խորը թիկունքում գտնվող օբյեկտներին հարվածներ հասցնելու պրակտիկայով՝ ռազմաօդային ուժերի, բալիստիկ սպառազինության և մեծ հեռահարության միջոցների ակտիվ կիրառմամբ: Նման դինամիկան Իսլամաբադին ստիպեց արմատապես վերանայել Նյու Դելիի հետ դիմակայության ռազմավարությունը՝ գիտակցելով սեփական ներուժի սահմանափակությունն ի դեմս Հնդկաստանի ռազմական հզորության

համակարգված ամրապնդման և բարձր ինտենսիվությամբ երկարատև պատերազմ վարելու նրա պատրաստակամության: Թուրքիայի և Սաուդյան Արաբիայի հետ հավաքական պաշտպանության համակարգի ձևավորման հարցում Պակիստանի համար լրացուցիչ խթան հանդիսացավ Աֆղանստանի հետ հարաբերությունների ապակայունացումը: Իսլամաբադում կարծում են, որ Քաբուլը, որը գտնվում է «Թալիբան» շարժման վերահսկողության ներքո, ոչ միայն ակտիվ գործընկերություն է զարգացնում Հնդկաստանի հետ, այլև աջակցություն է ցուցաբերում Պակիստանի ներսում գործող ծայրահեղական ուժերին, առաջին հերթին՝ պուշթունական շրջաններում:

Աֆղանա-պակիստանյան սահմանին 2026 թ. փետրվար-մարտ ամիսների ինտենսիվ սրացումը, որն ուղեկցվել է ռազմավարական նշանակության օբյեկտների ուղղությամբ հարվածներով, բացահայտել է Իսլամաբադի անկարողությունն ինքնուրույն կայունացնելու արևմտյան սահմանները և ազդելու Աֆղանստանի ներսում տեղի ունեցող արմատական գործընթացների վրա: Պակիստանի աշխարհաքաղաքական կայունությունը լուրջ սպառնալիքի տակ է. երկիրը փաստացի գտնվում է ապակայունացված հարևանի և թշնամական Հնդկաստանի միջև: Իրավիճակը սրվում է ներքին կրոնական ծայրահեղականության, անջատողական տրամադրությունների և երկարատև սոցիալ-տնտեսական ճգնաժամի պատճառով: Այս պայմաններում կայուն ռազմաքաղաքական դաշինքի մեջ մտնելը դիտարկվում է որպես խիստ անհրաժեշտ հիմք տարածաշրջանային հավասարակշռության պահպանման և ազգային անվտանգության ապահովման համար:

4. Սաուդյան Արաբիա. զենքի ներմուծումից անցում հավաքական անվտանգության ռազմավարության

Ձևավորվող դաշինքին մասնակցելու Սաուդյան Արաբիայի շահագրգռվածությունը մեծապես պայմանավորված է Իրանի և Իսրայելի հետ նրա հարաբերությունների բարդությամբ, ինչպես նաև ԱՄՆ ռազմավարության փոփոխության համապատկերում անվտանգության նոր երաշխիքների որոնմամբ: Թրամփի վարչակազմի կողմից իրականացվող «*անվտանգության նոր հայեցակարգը*» ենթադրում է Մերձավոր Արևելքում Վաշինգտոնի անմիջական ռազմական ներկայության կրճատում և տարածաշրջանային կայունության համար պատասխանատվության փոխանցում տեղական դաշնակիցներին:

Անկարայի և Իսլամաբադի համեմատ Էր Ռիադը ռազմական առումով պակաս ինքնաբավ է և պատմականորեն չի ապավինել իր աշխարհաքաղաքական շահերի իրականացման ուժային մեթոդներին: Չնայած ամերիկյան սպառազինությունների խոշորագույն ներկրողի իր կարգավիճակին՝ ներառյալ 2025 թ. մայիսին կնքված $140 մլրդ արժողությամբ տեխնիկայի մատակարարման և ԱՄՆ տնտեսությունում $600 մլրդ ներդրումների վերաբերյալ լայնածավալ համաձայնագրերը, Թագավորությունը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև:

Եմենի հութիների դեմ ոչ արդյունավետ ռազմարշավի փորձը և Պարսից ծոցում սրացման ընթացքում իրանական կողմի հասցրած զգալի վնասը հստակ ցույց տվեցին միապետության խոցելիությունը: Ակնհայտ է, որ նույնիսկ ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարքավորումները չեն երաշխավորում ՍԱԹ-ի պաշտպանունակության անհրաժեշտ մակարդակը տարածաշրջանում առաջնորդական առաջադրանքների ինքնուրույն կատարման համար՝ առանց հենվելու բազմակողմ պաշտպանական կառույցների վրա:

Ռազմաքաղաքական կայունության ապահովման հավաքական մեխանիզմների որոնումը ՍԱԹ-ի համար կենսական անհրաժեշտության է վերածվում Միացյալ Նահանգների կողմից Պարսից ծոցի գոտում իր ռազմական ներկայության հնարավոր վերանայման չափանիշների համապատկերում՝ լինի դա նոր պաշտպանական դոկտրինի շրջանակներում կամ որպես հակահիրանական արշավի անհաջող ավարտի հետևանք: Այդ կապակցությամբ Էր Ռիյադը պատրաստակամություն հայտնեց քննարկելու «*Ասիական ՆԱՏՕ*»-ի դերին հավակնող եռակողմ դաշինքի ձևավորման մասին նախաձեռնությունը:

Բանակցային գործընթացին սաուդյան իշխանությունների մասնակցությունը, հավանաբար, թելադրված է ոչ այնքան ընթացիկ փուլում տվյալ ձևաչափից նրանց ունեցած բարձր ակնկալիքներով, որքան որ ռազմավարական խուսավարման համար տարածություն ստեղծելու և արտաքին քաղաքական հանգամանքների վերջնական փոփոխության դեպքում դաշինքին անդամակցելու հնարավորությունն ամրագրելու ձգտմամբ: Փորձագիտական հանրույթի կարծիքով, Էր Ռիադին միություն հրավիրելու համար առանցքային նախապայման է դարձել այն բանի գիտակցումը, որ արտաքին ռազմական պաշարներին ապավինելը միապետության համար գոյատևման այլընտրանք չունեցող պայման է, որն ամուր արմատավորված է նրա պետականության ավանդույթներում:

Այս համատեքստում ՍԱԹ-ը հետևում է առավել ունևոր պետական կազմավորումների պատմական ուղուն, որոնք մի շարք առարկայական ու ենթակայական պատճառներով հակված են կողմնակի ուժերի ներգրավմամբ փոխհատուցել սեփական անվտանգության պակասը և իրացնել իրենց աշխարհաքաղաքական հավակնությունները:

5. Ներուժների սիներգիան և դերերի բաշխումն ապագա դաշինքում

Նոր դաշինքի նախագիծը, որը նախաձեռնել են Անկարան և Իսլամաբադը, հիմնված է Սաուդյան Արաբիայի հսկայական ֆինանսական և էներգետիկ պահուստների ռազմավարական օգտագործման վրա: Փորձագիտական համայնքի գնահատմամբ, բլոկի ճարտարապետությունը կառուցվում է յուրաքանչյուր մասնակցի եզակի ներուժի փոխադարձ համալրման սկզբունքի վրա՝ ընդհանուր հզորությունն առավելագույնի հասցնելու համար: Այս սիներգիայի շրջանակներում դերերի բաշխումը հետևյալն է.

- Սաուդյան Արաբիան, հանդես գալով որպես «*անվտանգության հիմնական սպառող*», ապահովում է դաշնակիցների մուտքն իր լայնածավալ ֆինանսական ակտիվներ.

- Պակիստանն առանցքային ներդրում է կատարում իր զինված ուժերի միջուկային բաղադրիչի տեսքով, փաստորեն, ստանձնելով «*միջուկային հովանոցի*» գործառույթները և դաշինքը կերպափոխելով որպես լիարժեք մայրցամաքային և գլոբալ «*ուժի բևեռի*».
- Թուրքիան ստանձնում է մտավոր ու տեխնոլոգիական միջուկի դերը, ապահովելով նորարարության մշակումը պաշտպանության ոլորտում և առաջավոր արևմտյան ստանդարտների ներդրումը զինված ուժերի շինարարության մեջ, ինչպես նաև անվտանգության ընդհանուր փիլիսոփայությունը.

Ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակն այդ երկրներին ստիպում է մշակել հավաքական պաշտպանության համակարգի ձևավորման հայեցակարգ, համակարգ, որը վերլուծաբանները հաճախ անվանում են «*Ասիական*» կամ «*Սուննիական ՆԱՏՕ*»:

Այնուամենայնիվ, երկկողմ համագործակցության ինտենսիվությունը ինքնին չի հանդիսանում լայնածավալ բազմակողմ կոալիցիայի գործունակության ավտոմատ երաշխիք: Օրինակ են Սաուդյան Արաբիայի և Պակիստանի երկարամյա դաշնակցային հարաբերությունները, որոնք զարգանում են 1950-ականների սկզբից: Այդ գործընկերության բարձրակետը «Փոխադարձ պաշտպանության ռազմավարական համաձայնագրի» կնքումն էր 17.09.2025 թվականին: Այս գործընկերության կրիտիկական կետը դարձավ 17.09.2025 թ. կնքված «Փոխադարձ պաշտպանության ռազմավարական համաձայնագիրը»: Տվյալ փաստաթուղթը չի սահմանափակվում տեխնոլոգիական փոխանակմամբ և զենքի մատակարարման պայմանագրերով, այլ նաև դե-յուրե հաստատում է պարտավորություն՝ անմիջականորեն մասնակցելու ռազմական գործողություններին, եթե կողմերից որևէ մեկի համար առաջանա սպառնալիք:

Գործընկերության ոչ պակաս խորը մակարդակով է բնութագրվում Իսլամաբադի և Անկարայի ռազմաքաղաքական փոխգործակցությունը: Այս հարաբերությունների պատմական հիմքը դրվել է դեռևս 1920-ական թվականներին, երբ Արևմտյան Հնդկաստանի մահմեդական համայնքներն (որոնց տարածքում հետագայում առաջացել է Պակիստանը) զգալի ֆինանսական աջակցություն էին ցուցաբերում Քեմալ Աթաթուրքի գլխավորած թուրքական ազգային շարժմանը: 1958-ին համագործակցությունը համաձայնագրի ստորագրման միջոցով ստացավ պաշտոնական կարգավիճակ, որը հիմք հանդիսացավ ՍԵՆՏՈ բլոկի համար («Բաղդադի դաշնագիր»), որի շրջանակներում երկու մայրաքաղաքներն էլ ապահովեցին Ասիայում ԱՄՆ ռազմավարական դաշնակիցների կարգավիճակը:

Կապերի աննախադեպ ամրապնդման նոր փուլը տեղի է ունեցել 2017–2025 թվականներին: Այդ ընթացքում կողմերը զգալիորեն ինտենսիվացրել են պաշտպանական գործընկերությունը՝ փոխգործակցության ձևաչափն ընդլայնելով դրանում Ադրբեջանի ակտիվ ներգրավվածության հաշվին:

Այնուամենայնիվ երկկողմ միությունների համակարգի առկայությունն ինքնին չի երաշխավորում ներունակ «*Ասիական ՆԱՏՕ*»-ի կայունությունը: Տվյալ կառուցվածքը չի վերացնում խորը տարաձայնությունները Սաուդյան Արաբիայի և Թուրքիայի միջև, որոնք առաջացել են Մերձավոր Արևելքի սուննիական աշխարհում առաջնորդության համար նրանց պայքարում: Այդ տարաձայնությունները լրացուցիչ սրվում են Կատարի հարցի և արաբական պետությունների ներքին գործերին միջամտելու՝ Անկարայի ձգտման պատճառով:

6. Եգիպտոսի ներառումը. նախագծի աշխարհատնտեսական չափումը

Հավանական է, որ Էր Ռիադի և Անկարայի երկխոսության մեջ միջպետական տարաձայնությունների կուտակային ազդեցությունն է կանխորոշել Եգիպտոսի ինտեգրումը դաշինքի ստեղծման խորհրդատվական գործընթացին: Ծանրակշիռ հիմք կա կարծելու, որ այս ձևաչափում Կահիրեի ընդգրկումը պնդել է Սաուդյան Արաբիան՝ դրանով իսկ ձգտելով ամրապնդել «*արաբական գործոնի*» նշանակությունն ապագա կառույցի ճարտարապետության մեջ և հարթեցնել սեփական խոցելիությունը պաշտպանական բաղադրիչում: Ավելին, եգիպտական կողմի միացումը ոչ միայն ընդլայնում է հավաքական անվտանգության համակարգի աշխարհագրական ընդգրկումը, այլև նախագծվող միությանը տալիս է ընդգծված աշխարհատնտեսական հարթություն: Փորձագիտական հանրության գնահատանքով՝ Եգիպտոսի ներգրավվածությունն առաջին հերթին պայմանավորված է նրա յուրահատուկ աշխարհառազմավարական դիրքով և Սուեզի տարանցիկ զարկերակի նկատմամբ վերահսկողությամբ, որի ռազմավարական դերն առարկայորեն աճում է Պարսից ծոցում իրադրության ապակայունացման պայմաններում:

Ներկայումս Էր Ռիադն առարկայորեն մշակում է արևմտյան ուղղությամբ ածխաջրածինների արտահանման հոսքերի ռազմավարական բազմազանացման սցենարները, որոնք ենթադրում են դեպի Կարմիր ծովի պահեստարաններ հիմնական տարանցման վերակողմնորոշում՝ ճյուղավորված խողովակաշարային ենթակառուցվածքի կիրառմամբ: Սաուդյան ղեկավարության հաշվարկներում նախագծվող ռազմաքաղաքական դաշինքին Կահիրեի ինտեգրումը կոչված է ոչ միայն շեշտելու «*արաբական ուղղագծի*» սուբյեկտայնությունը, այլև ապահովելու ծովային հաղորդակցությունների համալիր անվտանգությունը: Նման փոխդասավորությունը դիտարկվում է որպես Թագավորության «*արևմկյան թիկունքի*» ամրապնդման կարևոր գործոն՝ Եմենի ուղղությունից և Պարսից ծոցի ջրային տարածքից բխող սպառնալիքների մշտական սրացման պայմաններում:

Եգիպտոսի ինտեգրման համար ֆինանսա-տնտեսական խթանները դաշինքում հստակորեն նկատելի են Թուրքիայի մեջ վերականգնված քննարկումների ֆոնին՝ կապված Ստամբուլի ջրանցքի նախագծի հետ, որի իրականացումը սկսվել էր 2021 թ. ամռանը: Ըստ ամենայնի, թուրքական ղեկավարությունը ձգտում է ստեղծել սիներգիա նոր ջրանցքի և Սուեզի նեղուցի միջև՝ ձևավորելով գլոբալ ծովային տրանսպորտային մայրուղի: Այս երթուղին կոչված

է կապելու Հարավային Ասիայի, Հնդկական օվկիանոսի և Արևելյան Աֆրիկայի շուկաները եվրոպական մայրցամաքի հետ՝ միաժամանակ ապահովելով Պարսից ծոցի էներգակիրների կայուն և արդյունավետ լոգիստիկա դեպի Եվրոպայի սպառողներ արտահանման համար:

Եգիպտոսի ինտեգրումն այս ձևաչափում ցույց է տալիս նախագծի աստիճանական զարգացումը զուտ պաշտպանական միությունից դեպի բազմակողմանի կառույց, որը հավաքական անվտանգության խնդիրները միավորում է լայնածավալ աշխարհատնտեսական հավակնությունների հետ: Կահիրեն հանդես է գալիս որպես նշանակալից մասնակից՝ շնորհիվ շահավետ դիրքի, ռազմական ներուժի և բոլոր գործընկերների հետ կառուցողական հարաբերությունների համադրման: Հատուկ նշանակություն ունի 2024 թ. Թուրքիայի հետ կապերի կարգավորումը, ինչը թույլ է տվել հաղթահարել ձգձգված ճգնաժամը, որն առաջացել էր իշխանությունից նախագահ Մուհամեդ Մուրսիի հեռացվելու (2013 թ.) և բանտում մահանալու (2019 թ.) պատճառով: Դաշինքի ձևավորման գործընթացում Եգիպտոսի դիրքերի ամրապնդումը պայմանավորված է նրա ռազմավարական քաշով, ինչը Կահիրեն դարձնում է ձևավորվող տարածաշրջանային ճարտարապետության անփոխարինելի տարր:

7. Դաշինքի առաջնահերթությունները և ուժերի տարածաշրջանային հավասարակշռությունը

Ներկայումս նշված քառակողմ ձևաչափի շրջանակներում բանակցային գործընթացն աննախադեպ դինամիկա է ձեռք բերել և թևակոխել դիվանագիտական բաց ակտիվության փուլ, ինչը հաստատվում է արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների մակարդակով Իսլամաբադում (2026 թ. մարտի 29-ին և ապրիլի 14-ին) և Անթալիայում (2026 թ. մարտի 17-18-ին) հանդիպումների շարքով: Չնայած փոխգործակցության ակնհայտ հաստատութենականացմանը, կողմերը ընդգծված զսպվածություն են ցուցաբերում պաշտոնական հռչակագրերում՝ ձգտելով հեռու մնալ տվյալ միավորման՝ որպես ընդգծված հականատոյական ուղղվածության ռազմաքաղաքական դաշինքի մասին մեկնաբանություններից: Այս առումով բնորոշ է Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանի հայտարարությունը, որը խորհրդակցությունների Անթալիայի փուլի արդյունքներով ընթացիկ երկխոսությունը բնութագրել է բացառապես որպես «*ճգնաժամային խորհրդակցությունների*» մեխանիզմ: Նրա պնդմամբ՝ հանդիպումների օրակարգը պայմանավորված է ընթացիկ սրացման պայմաններում տարածաշրջանային սպառնալիքները կասեցնելու անհրաժեշտությամբ, այն դեպքում, երբ Իսրայելի հակազդմանն ուղղված միասնական ճակատ ձևավորելու մասին զանգվածային լրատվամիջոցների ենթադրությունները պաշտոնական հիմքեր չունեն:

Ակնհայտ է թվում, որ հենց նախագծվող միության հակահիսրայելական ուղղագիծն է հանդես գալիս որպես փորձագիտական-վերլուծական հանրության քննարկումների կենտրոնական օբյեկտ, ինչն էլ առաջացրել է Հաքան Ֆիդանի կողմից այդ դիրքորոշման

պարզաբանման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ «*իսրայելական գործոնը*» միակ որոշիչ և բավարար դրդապատճառը չէ նման ծավալուն ռազմաքաղաքական ճարտարապետության ստեղծման համար, որն ուժի ինքնուրույն գլոբալ բևեռի կարգավիճակի է հավակնում: Անշուշտ, Մերձավոր Արևելքում հրեական պետության հավակնությունները զսպելու հրամայականն ինտեգրված է դաշինքի օրակարգին, սակայն այն բացառիկ կամ գերիշխող առաջնահերթություն չէ: Կառուցվելիք բլոկի ռազմավարական նպատակահարմարությունը համալիր բնույթ է կրում և ենթադրում է ներուժների համախմբում՝ կանխելու անվտանգության համապարփակ անկումն Աֆրիկայից և Եվրոպայից մինչև Հարավային Ասիա՝ Իրանի շուրջ աննախադեպ սրման հետևանքով: Անվտանգության նախկին ճարտարապետության անշրջելի քայքայման և իր դասական ձևաչափով ՆԱՏՕ-ի փաստացի համահարթեցման պայմաններում մակրոտարածաշրջանը բախվել է ուժերի հավասարակշռության խախտմանը և թաքնված հակամարտային օջախների վերակենդանացմանը: Այս իրավիճակում «*Ասիական ՆԱՏՕ*» ստեղծելու նախաձեռնությունը տարածաշրջանային աշխարհաքաղաքական փոխդասավորության կայունացման, կրիտիկական սպառնալիքների կասեցման և առանցքային առևտրատրանսպորտային և պաշարային ներուժի նկատմամբ վերահսկողության հաստատման օրինաչափ փորձ է, որի ապակայունացումն անխուսափելիորեն կհանգեցնի եվրասիական տարածքի պետությունների համակարգային սոցիալ-տնտեսական ճգնաժամի:

Ամփոփում

Արևմտյան Ասիայի ամենամեծ և ազդեցիկ սուննիական երկրների նախաձեռնությունը՝ ստեղծել ուժի նման հավաքական բևեռ, գլոբալ մակարդակի լուրջ հայտ է: Հարցը, թե որքան մեծ են այս նախագծի իրականացման հնարավորությունները, մնում է բաց և պահանջում է առանձին խորը վերլուծություն: